«Շիրակի ուսուցիչների միություն» ԳԿ ՀԿ

Հետազոտական աշխատանք

Թեմա՝«Էկոլոգիական կրթությունը հանրակրթական դպրոցի աշխարհագրության ժամանակակից դասընթացներում»

Վերապատրաստող՝Ա. Ներսիսյան

Վերապատրաստվող՝Ն.Սիմոնյան

Առարկա՝Աշխարհագրություն

Գյումրի 2022

Բովանդակություն

Ներածություն ----------3

Գլուխ1.Հանրակրթական դպրոցում էկոլոգիական կրթության էությունը և ժամանակակից բովանդակությունը----------4

1.1 Էկոլոգիական կրթության էությունը----------4

1.2 Էկոլոգիական կրթության ժամանակակից բովանդակությունը: Էկոլոգիական մշակույթ----------6

Գլուխ2. Աշխարհագրության դասընթացների շրջանակներում էկոլոգիական կթության ապահովումը----------7

2.1 Էկոլիգիական կրթության բովանդակությունը աշխարհագրություն հանրակրթական առարկայի շրջանակներում----------7

2.2 Էկոլոգիական կրթությունը տարրական և միջին դպրոցի աշխարհագրության դասընթացներում----------11

2.3 Էկոլիգական կրթությունը ավագ դպրոցի աշխարհագրությանդասընթացում----------18

Եզրակացություն----------23

Գրականությանցանկ----------25

Ներածություն

Մարդկությունը գիտական և մշակութային աննախադեպ բարձր մակարդակով թևակոխել է 21-րդ դար:Սակայն այսօր մարդու առջև ծառացել են նոր իրողություններ, առաջին հերթին իր գոյության և կենսակերպի վերաիմաստավորման խնդիրները, որոնք առավելապես կապված են ռեսուրսների սխալ շահագործման, բնության վերաբերյալ սակավ գիտելիքների, տիրող էկոլոգիական իրավիճակի հետ: Դա վկայում որ այժմ առավել քան արդիական է դառնում հասարակության էկոլոգիական կրթության անհրաժեշտությունը: Քեոփսի բուրգի մակագրությունը զգուշացնում է. <<Մարդիկ կկործանվեն բնության ուժերն օգտագործել չկարողանալու և իրական աշխարհը չ ճանաչելու պատճառով»: Էկոլոգիական կրթությունը հնարավոր է իրականացնել հանրակրթական դպրոցի աշխարհագրության ժամանակակից դասընթացներում: Դա կապահովի աճող սերնդի էկոլոգիական պատրաստվածությանը, իրազեկվածությանը, էկոլոգիական մշակույթի ձևավորմանը:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել էկոլոգիական կրթության անհրաժեշտությունը նբովանդակությունը հանրակրթական դպրոցի աշխարհագրության ժամանակակից դասընթացներում:Կուրսային աշխատանքի նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ներկայացնել էկոլոգիական կրթության էությունը
- ներկայացնել էկոլոգիական կրթության ժամանակակից բովանդակությունը և էկոլոգիական մշակույթի էությունը
- նկարագրել էկոլոհիգիական կրթության բովանդակությունը աշխարհագրություն հանրակրթական առարկայի շրջանակներում
- նկարագրել էկոլոգիական կրթությունը հանրակթական դպրոցի տարրակ օղակի դասընթացներում
- էկոլոգիական կրթությունը միջին դպրոցի աշխարհագրության դասընթացներում
- էկոլոգիական կրթությունը ավագ դպրոցի աշխարհագրության դասընթացներում:

Աշխատանքը բաղկացած է25 էջերից, ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և 16 անուն գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Էկոլոգիական կրթության էությունը

Հայ մանկավարժության մեջ Էկոլոգիական կրթության կարևորությունը արտահայտում է Ղ. Աղայանի հետևյալ միտքը. «Բնությունը համաչափություն և կանոնդարություն է սիրում, ոչ մի բան մարդկային հնարմանց մեջ այդ հրաշալի ներդաշնակությանը այնքան համանմանելու պահանջ չունի, ինչքան մարդուս կրթության արվեստը»:

Բնական միջավայրի կայուն զարգացումը և ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը ապահովելու համար կարևոր բաղադրիչ է բնակչության բոլոր խմբերի իրազեկվածության մակարդակի բարձրացումը, ինչը ձեռք է բերվում էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցով, որն ի վերջո ձևավորում է հասարակության էկոլոգիական մշակույթը: Բնապահպանական և էթիկական նորմերի, արժեքների, մասնագիտական հմտությունների յուրացումն իրականացվում է անհատի էկոլոգիական կրթության և էկոլոգիական գրագիտությանը նպատակաուղղված հիմքի միջոցով, ինչը կնպաստի բնության նկատմամբ հոգատար, ոչ սպառողական և նվազագույն չափովվնասելու վերաբերմունք ունեցող հասարակության ձևավորմանը:

Էկոլոգիական կրթությունը անհատի և բնակչության կրթության, դաստիարակության, զարգացման, ինքնակրթության և փորձի կուտակման գործընթաց է, որն ուղղված է արժեքային կողմնորոշումների, վարքագծի նորմերի և շրջակա միջավայրի պահպանության և շրջակա միջավայրի անվտանգության ապահովման մասին հատուկ գիտելիքների ձևավորմանը:Էկոլոգիական կրթությունը ողջ կրթական համակարգի կարևոր և առաջնահերթ մասն է: Դրան տալով նոր որակ, ձևավորելով այլ վերաբերմունք ոչ միայն բնության, այլև հասարակությաննկատմամբ (էկոհումանիզմ):Էկոլոգիական ճգնաժամի սրումը XXI դարում մի շարք խնդիրներ է առաջացրելհամաշխարհային հանրության համար, այդ թվում՝ կրթական: Ռիո դե Ժանեյրոյում կայացած համաժողովում հռչակվել է կայուն զարգացման սկզբունքը

(«Կայուն զարգացում»): Ըստ ակադեմիկոս Ն.Ն. Մոիսեևի, չնայած «Կայուն զարգացում» հասկացության որոշակի հայեցակարգային երկիմաստությանը և դրա պարզեցմանը, որն անընդունելի է, զարգացման ներկա փուլում շեշտը պետք է դնել ընդհանրապես բնապահպանական կրթության հիմնական նպատակների և խնդիրների ձևակերպման վրա՝ մասնավորապես գիտական կադրերի ձևավորման խնդրի վրա։

Մարդու և բոլոր կենդանի օրգանիզմների գոյատևման էկոլոգիական պայմաններից ամենակարևորը Երկրի վրա **խաղաղ կյանքի ապահովումն** է։ Ահա թե ինչին էձգտում և ձգտելու է էկոլոգիականկրթություն ստացած մարդը։

Էկոլոգիական կրթության և դաստիարակության նպատակին հասնելու համար չպետք է սահմանափակվել միայն էկոլոգիական հասկացությունների համակարգի ուսուցմամբ։ Էկոլոգիական գիտելիքները դաստիարակչական արժեք են ձեռք բերում միայն այն ժամանակ, երբ դրանք դառնում են անձնային արժեքներ, և կապված կոնկրետ խնդիրների հետ, աշակերտները հայտնվում են այնպիսի իրավիճակում, որում արտահայտվում է մարդկանց վերաբերմունքը խնդրի լուծման որոնողական ընթացքի նկատմամբ, այսինքն ստացած տեսական գիտլիքներ, պետքէ հասցնել այնպիսի մակարդակի, որ աշակերտները գործնականում դրանք կիրառեն։

Էկոլոգիական կարողություններն ու հմտությունները զարգացնելու համար կարելի է կիրառել տարբեր միջոցներ, օրինակ պրոբլեմային զրույց, նյութի պրոբլեմային հնարներով շարադրումը, նպատակային դերային խաղեր, սուր էկոլոգիական իրավիճակների ցուցադրումն ու վերլուծությունը, բնապահպանական գործնական աշխատանքներ (օրինակ շաբաթօրյակներ, ցուցանակների պատրաստում)։ Իրենց գործողություններով կարգավորելով շրջակա միջավայրը՝ դպրոցականները մարդկանց վարքի և վատ վնասաբեր արարաքների նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունք են դրսևորում։

1.2 Էկոլոգիական կրթության ժամանակակից բովանդակությունը: Էկոլոգիական մշակույթ

Ժամանակակից դպրոցի խնդիրներից է անձի էկոլոգիական մշակույթի ձևավորումը: Էկոլոգիական մշակույթն իր դրսևորումն է գտնում արտադրական և կենցաղային բոլոր ոլորտներում, այն կոչված է ապահովելու բնական միջավայրի պահպանումն ու բարելավումը:

Էկոլոգիական մշակույթը բնության նկատմամբ սովորողի գիտակցված վերաբերմունքն է, որն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունոու զարգացումը, նպաստում է բարենպաստ պայմանների ստեղծմանըմարդու կյանքի գործունեության համար: Էկոլոգիական մշակույթի կարևոր բաղադրամաս են համարվում՝ 1. գիտելիքները մարդ-բնություն փոխհարաբերությունների վերաբերյալ, 2. այդ փոխհարաբերությունները օբյեկտիվ գնահատելու կարողությունը, 3.համոզմունք բնության ռացիոնալ օգտագործման և բնապահպանման անհրաժեշտությանվերաբերյալ: Սովորողների էկոլոգիական մշակույթի մակարդակը կախված է էկոլոգիական կրթության որակից, որը պարզաբանում է մարդու տեղն ու դերը բնության մեջ:

Ժամանակակից կրթության համատեքստում էկոլոգիական կրթության հիմնախնդիրները դիտարկվել են Վերնադսկու, Գիրուսևի, Դեժնիկովայի Զվերևի Մ. Ասատրյանի, լ. Ավանեսյանի, Ա. Աջամօղլյանի, Փ Սարգսյանի, Մ. Ասատրյանի, Հ. Դերձյանի, Վ. Մելիքսեթյանի և այլոց աշխատություններում:[1]

Աճող սերնդի բարձրակարգ էկոլոգիական մշակույթի դաստիարակումը թույլ կտա հասարակական կյանքում մի ամբողջ շարք բացասական երևույթներ հաղթահարել:

Ժամանակակից գիտական գրականության մեջ «մշակույթ» հասկացությունը համարում են մարդու գոյության, նրա կենսագործունեության միջոց: Էկոլոգիական մշակույթը, ինչպես և մշակույթի այլ տեսակները մարդու կողմից էկոլոգիական կրթության ոլորտում ստեղծած գիտելիքների, կարողությունների, հմտությունների համակարգի, ինչպես նաև էկոլոգիական գործունեության որոշակի փորձի հիման վրա

[1]Ասատրյան Լ. Թ. «Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները», «Արտագերս» Երևան 2006 թ, 334 էջ, էջ :

նյութական և հոգևոր արժեքների ամբողջությունն է: Էկոլոգիական մշակույթը բնությունից օգտվելու ազգային-մշակութային սովորույթն ու արժեքն է:

Էկոլոգիական մշակույթի ձևավորման համար էկոլոգիական կրթությանը զուգահեռ պետք է կազմակերպվի սովորողի էկոլոգիական դաստիարակությունը: **Էկոլոգիական դաստիարակությունը** որոշակի պայմանների ստեղծումն է անձի կողմից էկոլոգիական մշակույթի յուրացման համար, որը ձևավորվել է հասարակության մեջ և պետք է փոխանցվի սերունդներին: 20-րդ դարի 80-ական թթ. Էկոլոգիա և էթիկա գիտությունների սահմանագծին ստեղծվեց մի նոր գիտություն, որը կոչվեց էկոլոգիական էթիկա: **Էկոլոգիական էթիկան** գիտություն է մարդու և բնության միջև բարոյական հարաբերությունների վերաբերյալ, որի հիմքում բնության ընկալումն է՝ իբրև համազոր գործընկերոջ, բոլոր կենդանի օրգանիզմների հավասար իրավունքների սահմանափակումը:[2]

ԳԼՈՒԽ 2

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

2.1 Էկոլիգիական կրթության բովանդակությունը աշխարհագրություն հանրակրթական առարկայի շրջանակներում

Էկոլոգիական պատկերացումների ձևավորման արմատները ձգվում են մինչև հնագույն ժամանակները: Շրջապատող միջավայրի և նրա հետ ունեցած փոխհարաբերությունների բնույթի մասին գիտելիքները գործնական նշանակություն են ստացել դեռևս մարդկային տեսակի զարգացման արշալույսին, քանի որ նա բնության վրա ազդել է Երկիր մոլորակի վրա հայտնվելու պահից սկսած: Ժամանակի ընթացքում այդ ազդեցությունը սկսել է մեծանալ և տարածվել բոլոր ոլորտների վրա:
Ժամանակակից աշխարհագրության դասընթացի վերակառուցվող ծրագրերում արտացոլված է ամբողջ դասընթացի կառուցվածքը:Յուրաքանչյուր մասն ավարտվում է էկոլոգիական վերլուծությամբ:

[2]Մինայսան Ա. «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա», Երևան 2013 թ.:

Դպրոցական աշխարհագրության էկոլոգացումըկարևոր տեղ է զբաղեցնում էկոլոգիական գիտելիքների ձևավորման մեջ, հնարավորություն է տալիս ուսուցչին ցույց տալու «բնություն-մարդ-տնտեսություն» համակարգում պատճառահետևանքային կապերը, աշակերտներին ներգրավելու սոցիալական էկոլոգիայի և երկրաէկոլոգիայի աշխարհը, ուսուցումը դարձնելու ավելի հետաքրքիր, ցույց տալ գործնականում էկոլոգիական գիտելիքների կիրառման հնարավորությունները, ավելի լայնորեն հետազոտել երկրագիտական նյութը:

Անհրաժեշտ է նաև նշել, որ դպրոցական աշխարհագրության էկոլոգիականացման մեջ առաջատար նշանակություն է տրվում մարդուն շրջապատող միջավայրի պահպանման և վերականգման, ռացիոնալ բնօգտագործման հարցերին:

Ն. Ֆ. Վինոկուրովայի կարծիքով «դպրոցական էկոլոգիական և աշխարհագրական կրթության նպատակներն ու խնդիրները սերտորեն կապված են և լրացնում են միմյանց: Դպրոցական աշխարհագրությունը կոչված է ամբողջական պատկերացումներ տալու Երկրի որպես մարդկության մոլորակի մասին, ձևավորելու անձի ընդհանուր, մասնավորապես էկոլոգիական մշակույթը»:

Էկոլոգիական կրթությունը էկոլոգիական գիտելիքների, կարողությունների, հմտությունների, սովորությունների համակարգի ձևավորման գործընթաց է, որն անձի էկոլոգիական մշակույթի հիմքն է հանդիսանում:

Էկոլոգիական կրթությունը դպրոցում կրում է միջառարկայական բնույթ և էկոլոգիական հարցերը ուսումնասիրվում են բոլոր բնագիտական առարկաների՝ աշխարհագրության, կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի շրջանակներում: Կենսաբանության շրջանակներում ուսումնասիրվում են կենդանի օրգանիզմների և շրջակա միջավայրի փոխհարաբերությունները, դիտարկվում են կենսոլորտի, էկոհամակարգերի վերաբերյալ ուսմունքները: Քիմիայի շրջանակներում դիտարկվում է քիմիական տարրերի ազդեցությունը մթնոլորտի և ջրոլորտի վրա, պարարտանյութերի ազդեցությունը հողի, բույսերի, կնեդանիների վրա և այլն: Ֆիզիկայի դասընթացում սովորողներն ուսումնասիրում են ռադիոակտիվ նյութերի ազդեցությունը կենդանի օրգանիզմների վրա: Այսինքն, ակնայտ է դառնում, որ էկոլոգիական կրթության մեջ ուսումնասիրման հիմնական ուղղություն է հանդիսանում հասարակություն-բնություն փոխհարաբերությունները: Աշխարհագրական գիտության համար հետազոտության էկոլոգիական սկզբունքը

ընդունված և ադեն ավանդական դարձած ուղղություն է: Աշխարհագրության բնագավառում այս սկզբունքով զարգացող ուղղությունը կոչվում է **կոնստրուկտիվ**աշխարհագրություն, որն արդի ժամանակաշրջանում ստացավ գեոէկոլոգիա անվանումը: **Գեոէկոլոգիան** ուսումնասիրում է մարդ-բնություն հարաբերությունների փոխադարձ կապերը, այդ կապերից առաջացած խնդիրները, արտադրական և բնական ամալիրների փոխադարձ կապերը, բնատեխնիկական համակարգի ստեղծման հիմնահարցերը և բազմաթիվ այլ էկոլոգիական խնդիրներ:[3] Գլոբալ և ռեգիոնալ մասշտաբի էկոլոգիական շատ պրոբլեմներ ունեն աշխարհագրական բնույթ, այդ իսկ պատճառով հանդիսանում են գեոէկոլոգիայի ուսումնասիրման առարկա և առավել խորությամբ կարող են ուսումնասիրվել աշխարհագրության ողջ դասընթացում:Գեոէկոլգիայի դասընթացի շնորհիվ ձևավորվում են աշակերտների արժեքային համակարգն ու արժեքային կողմորոշումները, բնության բաղադրամասերի փոխկապակցվածության և ամբողջականության գաղափարը, մարդ-բնություն փոխհարաբերությունները, առօրյա կյանքում բնության մեջ գոյատևելու կանոնների պահպանման անհրաժեշտությունը: Ուսումնասիրվում են բնության զարգացման հիմնական օրինաչափությունները (ամբողջականությունը, նյութի շրջապտույտը, զոնայականությունը և այլն), անթրոպոգեն ազդեցությունը տարբեր մայրցամաքների բնության վրա, բնապահպանական միջոցառումների (արգելոցների, արգելավայրերի, ազգային պարկերի) կազմակերպումը և այլն:

Էկոլոգիական և աշխարհագրական կրթությունները սերտ փոխկապակցված են, դրանց **նպատակներնու խնդրիրները** բազմիցս համընկնում ենև կայանում հետևյալում՝

1) ձևավորել աշակերտների մոտ գիտելիքներ Երկրի բնության և նրա զարգացման հիմնական օրենքների մասին, իբրև անհրաժեշտ նախապայման մարդ-բնություն փոխհարաբերության հասկացման համար,

2) ձևավորել գիտելիքներ և հմտություններ մարդ-բնություն փոխհարաբերության հետևանքների կանխատեսման և գնահատման համար, ինչպես նաև գիտելիքներ

[3]Մինայսան Ա. «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա», Երևան 2013 թ.:

էկոլոգիական խնդիրների լուծման սկզբունքների, մոտեցումների և մեթոդների վերաբերյալ,

3) ձևավորել էկոլոգիական մտածողություն, որիէությունը Երկրի վրա ընթացող պրոցեսների փոխկապակցված ընկալումն է, բնության վերաբերյալ հուզարժեքային վերաբերմունքի ձևավորումը, բնության և բնական ռեսուրսների պահպանման անհրաժեշտության գիտակցումը սերունդների համար:

Դպրոցական աշխարհագրությունը բովանդակում է օրենքներ և հասկացությունները, որոնք հենքային են գեոէկոլոգիայի համար, օրինակ՝ բնության զարգացման ամբողջականության և փոխկապակցվածության մասին օրենքը, նյութի շրջապտույտը բնության մեջ, ինչպես նաև կարևոր հասկացություններ բնական համալիրների, կենսոլորտի և աշխարհագրական թաղանթի վերաբերյալ: Դպրոցական աշխարհագրության էկոլոգիական բովանդակության կարևոր բաղադրամաս են համարվում **էկոլոգիական կարողությունները՝**

1. կարողանալ բացատրել բնական ռեսուրսների յուրահատկությունները,
2. գնահատել դրանք
3. կանխատեսել բնության վրա ունեցած մարդու ներգործության հետևանքները,
4. կարողանա կազմել սխեմատիկ էկոլոգիական բովանդակության քարտեզներ տարածքի փոքր հատվածների համար և այլն:

Էկոլոգիական կրթության համար մեծ նշանակություն ունեն ինքնուրույն գործնական աշխատանքները, որոնք ներառում են առաջադրանքների երեք տեսակ՝

1. դիտարկել և բնութագրել մարդու ազդեցության տակ գրնվող բնական օբյեկտը,
2. բացատրել էկոլոգիական խնդրի էությունն ու բացահայտել պատճառահետևանքային կապը «հասարակություն-բնություն» համակարգում,
3. առաջարկել էկոլոգիական խնդրի լուծման որևէ ուղի, ապացուցել և պաշտպանել սեփական տեսակետը:

Ինքնուրույն աշխատանքների բովանդակության բարդեցումը պետք է սկսվի էկոլոգիական խնդրի պատճառի բնույթի նկարագրումից և ընթանա մինչև նրա լուծման եղանակների կանխատեսումը, մտավոր գործողությունների բարդեցումը՝ պատճառահետևանքային կապերի բացահայտումից մինչև օրինաչափությունների պարզաբանումը, ուսուցման եղանակների բարդեցումը համապատասխանաբար, պետք է ընթանա խնդրի նկարագրումից մինչև հետևանքների կանխատեսումը, խնդրի

լուծումը և ի վերջո բնության ռացիոնալ օգտագործման նկատառումներով տարածքի զարգացման սեփական մոդելի նախագծումը:

2.2 Էկոլոգիական կրթությունը տարրական և միջին դպրոցի աշխարհագրության դասընթացներում

Տարրական օղակ:Հանրակրթական դպրոցում առաջին աշխարհագրական գիտելիքները և դրան զուգահեռ էկոլոգիական գիտելիքները փոխանցվում են 2-4-րդ դասարաններում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» առարկայի շրջանակներում:

Այս դասարանում էկոլոգիական կրթությունն ունի հետևյալ բովանդակությունը. երևույթների և օբյեկտների մարդածին ու բնածին լինելու վերաբերյալ գաղափարի փոխանցում, կենդանական ու բուսական աշխարհի էնդեմիկների, վտանգված տեսակների մասին գիտելիքներ: [4]

3-րդ դասարանի դասընթացում աշակերտները գաղափար են կազմում եղանակի և դրա փոփոխությունների վերաբերյալ: [5]

4-րդ դասարանի դասընթացում առավել ծավալուն և բազմաբնույթ են էկոլոգիական գիտելիքներ: «Բնություն», «Բնությունը և մարդը» բաժիններում ներկայացվում է մարդու տնտեսական գործունեության հետևանքով էկոհամակարգում տեղի ունեցող փոփոխությունները, և իրենց վարվելակերպը բնության բաղադրիչների նկատմամբ: «Մեր հայրենիքը» թեմայում հայրենիքին վերաբերող տարաբնույթ գիտելիքներին զուգահեռ ներկայացվում է հայրենի բնաշխարհը, դրա պահպանության ու հոգատար վերաբերմունքի կարևորությունը: [6]

Միջին օղակ: Բնության և մարդու փոխգործակցության վերաբերյալ տարրական օղակում սովորողների ստացած նախնական գիտելիքների խորացված ուսուցումը շարունակվում է հանրակրթական դպրոցի միջին օղակում՝ 5-9-րդ դասարաններում:

---

[4]Ալեքսանյան Լ. Թորոսյան Ն. «Ես և շրջակա աշխարհը 2», «Աստղիկ գրատուն» Երևան 2018 թ:

[5]Ալեքսանյան Լ. Թորոսյան Ն. «Ես և շրջակա աշխարհը 3», «Աստղիկ գրատուն» Երևան 2018 թ:

[6]Թորոսյան Ն. «Ես և շրջակա աշխարհը 4», «Աստղիկ գրատուն» 2018 թ, 176 էջ:

5-րդ դասարանում աշխարհագրական և էկոլոգիական կրթությունն ապահովում է «Բնագիտություն» առարկան: Դասընթացում 4 բաժիններով ներկայացված է աշխարհագրական թաղանթը՝ «Քարոլորտ», «Ջրոլորտ», «Մթնոլորտ», «Կենսոլորտ»: Յուրաքանչյուր բաժին ավարտվում է տվյալ ոլորտի պահպանման վերաբերյալ գիտելիքների հաղորդմամբ:[7]

Դասընթացն ամփոփվում է «Երկրագնդի ոլորտների փոխադարձ կապերը: Նյութերի և էներգիայի շրջապտույտը թեմայով»: Որտեղ ներկայացված են քարոլորտի, ջրոլորտի, մթնոլորտի, կենսլորտի միջև եղած փախադարձ կապերը, նյութի և էնեգիայի շրջատույտը այդ կապերի շնորհիվ: Սովորողները գաղափար են կազմում աշխարհագրական թաղանթի ոլորտների փոխկապակցվածությանմասին, որի պատճառովերբ մարդը ազդում որևէ ոլորտի, որևէ բաղադրիչի վրա ազդում է ամբողջ էկոհամակարգի վրա:[8]

6-րդ դասարանում աշխարհագրական գիտելիքներ արդեն փոխանցվում են բուն աշխարհագրություն առակայի շրջանակներում: Դաընթացի համապատասխան բաժինը կոչվում է «Աշխարհագրական թաղանթ: Մայրցամաքներ և օվկիանոսներ»:

Դասընթացի առաջին թեման աշխարհագրական թազանթն է և մարդը աշխարհագրական թաղանթում: Ներկայացված է աշխարհագրական թաղանթի կառուցվածքը, հատկանիշները, զարգացումը, պլատֆորմները և գեոսինկլինալները, կլիմայական գոտիները: Աշխարհագրական գոտիականությունը, զոնայականությունը: Մարդու ազդեցությունը լանդշաֆտների վրա, մարդածին լանդշաֆտներ:

Մայրցամաքներ բաժնում ուսումնասիրում են յուրաքանչյուր մայրցամաքի աշխարհագրական դիրքը և ափագիծը, երկրաբանական կառուցվածքը, մակերևույթը, կլիման, կլիմայական գոտիները, ներքին ջրերը, բնական զոնաները, հողաբուսական ծածկույթը, կենդանական աշխարհը:

Աֆրիկայի ջրագրությունը ուսումնասիրելով աշակերտները կտեսնեն, որ այն անհավասարաչափ է բաշխված: Այստեղ առկա է քաղցրահամ ջրիխնդիր:

---

[7]Ղազարյան Է. Թոչունյան Ա. Մելիքյան Գ. Վարդանյան Թ. Խաչատրյան Հ. «Բնագիտություն 5», «Աստղիկ գրատուն» Երևան 2013 թ, 159 էջ:

[8]Ղազարյան Է. Թոչունյան Ա. Մելիքյան Գ. Վարդանյան Թ. Խաչատրյան Հ. «Բնագիտություն 5», «Աստղիկ գրատուն» Երևան 2013 թ, 159 էջ:

Ավստալիա մայրցամաքի էկոլոգիական իրավիճակի վերաբերյալ փոխանցվող նյութն ունի հետևյալ բովանդակությունը. մայրցամաքի 65 %-ը յուրացված է մարդու կողմից, ինչը հանգեցրել էէկոհամակարգերիփոփոխության, բուսականնկենդանականաշխարհիտեսակների քանակի և տարածման արելաներիկրճատման:«Անտարկտիդա» թեմայի ուսումնասիրության էկոլոգիական հատվածը ներառում է Երկիր մոլորակի մթնոլորտի միջին ջերմաստիճանի բարձրացման և գլոբալ տաքացման հետևաքով սառցադաշտերի ինտենսիվ հալվելու երևույթի մասին տեղեկությունների հաղորդումը, և դրա դեմ միջոցառումներ կազմակերպելու մասին գաղափար կազմելը:

«Հարավային Ամերիկա» թեման ուսումնասիրելիս քննարկվող հիմնական էկոլոգիական խնդիրն Ամազոնի անտառների արագ կրճատումն է: Անտառահատումները տեղի են ունենում շատ մեծ արագությամբ, սակայն նույն արագությամբ անտառներ չեն տնկվում:

«Հյուսիսային Ամերիկա» թեմայի էկոլոգիական կրթության բովանդակությունը հետևյալն է. Հույսիսային Ամերիկայում երկարամյա բարեկեցման և տնտեսական յուրացման ընթացքում զգալի փոփոխություններ են կրել բնական լանդշաֆտները: Կրճատվել են բարեխառն գոտու և արևադարձային գոտու անտառները, անճանաչելիորեն փոխվել են պրերիաները:

Բնական լանդշաֆտների պահպանման և ուսումնասիրման համար մայրցամաքի տարբեր շրջաններում ստեղծված են հատուկ ապանվող տարածքներ՝ Մեծ Կանյոն, Ելոուսթոնյան, Սեքվոյա ազգային պարկերը և այլն:

Եվրասիա մայրցամաքի ընդհանուր բնութագիրն ուսումնասիրելուն զուգընթաց սովորողներին փոխանցվող էկոլոգիական գիտելիքները վերբերում են Եվրասիայ ջրագրությանը, կլիմային և հողաուսական ծածկին:

Եվրասիայում գտնվող շատ գետերի վրա կառուցվել են ջրամբարներ, ջրային էլեկտրակայաններև կասկադներ, որոնք բացասական ազդեցություն են ունեն ջրավազանի բուսական ու կենդանական աշխարի վրա: Լճերի վրա կառուցվել են ջրամբարներ, դրանք էլ իրենց հերթին փոփոխության են ենթարկում տարածքի միկրոկլիման, դարձնելով ավելի խոնավ:

6-րդ դասարանի աշխարհագրության դասընթացի վերջին թեման «Օվկիանոսներ»-ն է: Թեմայի էկոլոգիական գիտելիքների հատվածը վերաբերում է Համաշխարհային օվկիանոսի էկոհամակարգի պահպանմանը: [9]

6-րդ դասարանի ««Աշխարհագրականթաղանթ»: Մայրցամաքներ, օվկիանոսներ» դասընթացիուսումնասիրմանարդյունքում սովորողի մեջ ձևավորված էկոլոգիական մշակույթի աժեքային համակարգի շնորհիվ նապետք է՝

- **գիտակցի**աշխարհագրականթաղանթիոլորտներիփոխադարձկապերիկարևորությունը որպեսնրաամբողջականությանհիմնարարպայման,
- **գիտակցի**մայրցամաքներիևօվկիանոսներիբազմազանությունը որպեսերկրագնդիհարստություն,
- **գիտակցի**երկրագնդիբնությանպահպանությանևայդառումովքաղաքացիականդիրքորոշմանանհրաժեշտությունը,
- **գնահատի**մայրցամաքներիևօվկիանոսներիբնությանտարրերիէկոլոգիականնգեղագիտականարժեքը,
- **գիտակցի**տարբերմայրցամաքներիբնակչությանկյանքիպայմաններիբազմազանության, կենցաղիևմշակույթիտարբերությունների՝ որպեսմարդկայինհասարակությանհամընդհանուրհարստությանդերը,
- **արժևորի**մայրցամաքներիևօվկիանոսներիբնականպայմաններիուռեսուրսներին շանակությունը,

դրանցռացիոնալօգտագործմաննպահպանությանանհրաժեշտությունը:

Միջին օղակի աշխարհագրության դասընթացը շարունակվում է 7-րդ դսարանում, բաժինը կոչվում է «Հասարակական աշխարհագրություն: Աշխարհ»:«Աշխարհի բնակչություն» թեման ուսումնասիրելիս աշակերտներին հաղորդում են աշխարհի բնակչության ընդհանուր բնութագիրը, վերարտադրությունը, կազմը, տեղաբաշխումն ու տարաբնակեցումը, և բնակչության բնության վրա ունեցած ներգործության արդյունքում առաջացող էկոլոգիական խնդիրների վերաբերյալ գիտելքներ: Օրինակ բնակչության վերարտադրության բարձր ցուցանիշի պատճառով սրվում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հանքային, հողային, էներգետիկ և այլ տիպի ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդիրները: Սրվում է բնակչությանը պարենով

[9] Հովսեփյան Ա., Գրիգորյան Ա., Մանասյան Մ. «Աշխարհագրություն 6» Երևան 2018թ, 159 էջ:

ապահովելուհիմնախնդիրը, որը լուծելու համար ավելանում են քիմիական հավելումները սննդի մեջ, հետագայում դրանք հայտվում են շրջապտույտի մեջ և վնասում բնությանն ու մարդկանց առողջությանը:

«Բնական պայմաններ և բնական ռեսուրսներ» թեմայում ներկայացված է բնական ռեսուրսների պաշարները, դրանց արդյունահանման, վերամշակման և կիրառման արդյունքում առաջացող էկոլոգիական խնդիրները:

Թեմայի էկոլոգիական կրթության նպատակն է աշակետների մեջ ձևավորել բնության, բնական ռեսուրսների, շրջակա միջավայրի նկատմամբ ոչ սպառողական վերաբերմունք:

«Համաշխարհային տնտեսություն» թեմայում աշակերտները ծանոթանում են մարդու տնտեսական գործունեության ոլորտներին, և դրանցից յուրաքանչյուրի հասցրած էկոլոգիական վնասներին: Ներկայացված են տնտեսության տարբեր ճյուղերի տեղաբաշխման վրա էկոլոգիական գործոնի ազդեցությունը:

Սովորողները ծանոթացնում են ատոմային էլկտրակայանների աշխատանքին, գործարկման ընթացքում հնարավոր վթարների ունեցած էկոլոգիական ռիսկերին:

Դասընթացում ներկայացված են էներգաարտադրությանայլընտրանքային, ոչ ավանդական աղբյունտրը. արեգակնային, քամու, մակընթացության և տեղատվության, երկրաջերմային էներգիան, կենցաղային աղբի այրումից ստացվող էներգիան էկոլոգիական վնասներից խուսափելու համար:

Քիմիական արդյունաբերությանձեռնարկությունները սովորաբար բնակավայրերից հեռու են կառուցվում, որոհետև թափոններն ու արտադրության ընթացքում առաջացող նյութերն ունեն վտանգավոր ազդեցություն շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա:

Գյուղատնտեսության էկոլոգիական վնասներն այլ են: Բուսաբուծության համար կատարվում են զանգվածային անտառահատումներ, ճահիճների չորացում, կատարվում է հողի քիմիական մելիորացիա, արհեստական ոռոգում, դրանց պատճառով փոխվում է տեղանքի լանդշաֆտը և էկոհամակարգը, արոտավայրերի գերարածեցումը ևս բացասական երևույթ է հանդիսանում: Այս բոլորը բերում են անապատացման, հողի դեգրատացիայի, էրոզիայի և աղակալման: Խնդիրները մեղմացնելու համար գյուղատնտեսությունը պետք էզարգացնել ինտենսիվ ուղիով:

որսը օրենքով արգելված է կամ սահմանափակված:

«Տրանսպորտ» թեմայում էկոլոգիական գիտելիքները վերաբերում են տրանսպորտի տարբեր տեսակների (ցամաքային (երկաթուղային, ավտոմոբիլային, խողովակաշարային, էլեկտրոնային), օդային, ջրային) ունեցած ազդեցությունը շրջակա միջավայրի, մթնոլորտի և ամբողջ էկոհամակարգի վրա:

7-րդ դասարանի աշխահագրության դասընթացում ներկայացվող էկոլոգիական կրթության գիտելիքները ունեն վերը շարադրված բովանդակությունը,որի յուրացման արդյունքում սովորողը պետք է՝

•գիտակցիերկրագնդիբնականռեսուրսերիսահմանափակությունը,

•մերժիբնությաննկատմամբսպառողականհոգեբանությունը:

8-րդ դասարանում աշխարհագրության դասընթացը կոչվում է «Տարածաշրջանների աշխարհագրություն»:Դասընթացում ներկայացվող գիտելիքներն են՝ յուրաքանչյուր տարածշրջանի ընդհանուր բնութագիրը, բնական պայմաններն ու ռեսուրսները, բնակչությունը, տնտեսությունը և առկա էկոլոգիական խնդիրները: [10]

9-րդ դասարանում աշխարհագրության համապատասխան բաժինը կոչվում է «Հայաստանի աշխարհագրություն»: Դասընթացում ներկայացված է հայկական լեռնաշխարհի և Հայաստանի բնական պայմաններն ու ռեսուրսները, կլիման, ջրագրությունը, հողային ծածկույթի, կենդանական ու բուսական աշխարհի առանձնահատկությունները, Հայաստանի տնտեսությունը, բնակչությունը, վարչատարածքային բաժանումը (ներառյալ Արցախը):

Հայաստանում իրականցվում են հողաբարելավման միջոցառումներ՝ արհեստական ոռոգում, քիմիական մելիորացիա, հորիզոնական հերկում, ճահիճների չորացում: Հողային ծածկույթին բնորոշ է աղակալման և անապատացման խնդիրները: Որոնք հետևանք են սխալ մշակման:

Ջրագրության ամենասուր արտահայտված խնդիրը Սևանի հիմնախնդիրն է:

Կենդանական ու բուսական աշխարհը հարուստ է ու բազմատեսակ, շատ են էնդեմիկները:

Ներկայացված է անտառների նշանակությունը՝ հողապահպան, ջրապահպան և կլիմայակարգավորող: Սակայն անտառահատումները ժամանակին Հայաստանում

[10]Մանասյան Մ., Մարգարյան Ռ. Հովսեփյան Ա., Հովհաննիսյան Գ. «Աշխարհագրությոն 8», «Մանմար» Երևան 2018, 223 էջ:

ունեցել են զանգվածային բնույթ, այդ իսկ պատճառով դրանց մակերեսը կրաճտվել է,այժմ զբաղեցում է ՀՀ տարածքի ընդամենը 11 %-ը:

Էկոլոգիական կրթության հատվածը ներառում է նաև ՀՀ-ում բնօգտագործման և բնապահպանության խնդիրների ծանոթացումը: Հայաստանը ջրասակավ, հողասակավ, անտառասակավ երկիր է:

«Հատուկ պահպանվող տարածքները: ՀՀ «Կարմիր գիրք» թեմայում ամբողջությամբ աշակերնտերին է մատուցվում հայրենի բնության էտալոնների պահպանման համար կազմակերպված արգելոցների, արգելավայրերի, ազգային պարկերի և բնության հուշարձաննեի բնութագրը և նշանակությունը:[11]

«Հայաստանի աշխարհագրություն» դասընթացը նպատակ ունի ապագա հայի մեջ ձևավորելու անսահման սեր հայրենի բնության յուրանքանչյուր բաղադրիչի նկատմամբ, այնքան ամուր սեր որը կբավարարի հաղթահարել պատմական հայրենիքը ետ վերադարձնելու դժվարությունները, հայրենիքը վեր կդասի սեփական անձից և այդ սիրով վերամիավորել որջ Հայաստանը:

Դասընթացի արդյունքում սովորողը պետք է՝

- **կարևորի** Հայկական լեռնաշխարհը որպես հայության բնօրրան և հայ ժողովրդի հայրենիք,
- **Գիտակցի** Հայաստանի և Արցախի Հանրապետությունների տարածքների և ընդհանրապես Հայկական լեռնաշխարհի բնառեսուրսային, բնապատմական, հոգևոր-գեղագիտականարժեքը,
- **Գիտակցի** իր հայրենիքի բնառեսուրսային ներուժի ռացիոնալ օգտագործման, պահպանության և վերականգնման կարևորությունը:

Հանրակրթական դպրոցի աշխարհագրության դասընթացի միջին օղակն ավարտող սովորողի մեջ ձևավորված է էկոլոգիական կրթության հիմքը

[11]Մանասյան Մ. Հովսեփյան Ա. « Հայաստանի աշխարհագրություն 9», «Տիգրան Մեծ» Երևան 2018, 239 էջ:

2.3 Էկոլիգիական կրթությունը ավագ դպրոցի աշխարհագրության դասընթացում

Ավագ դպրոցի բոլոր դասարաններում՝ 10-րդ, 11-րդ 12-րդ, աշխարհագրության դասընթացը կոչվում է «Ընդհանուր աշխարհագրություն»: [12]

Դասընթացի նպատակն է, որ աշակերտներն արդեն լիարժեք պատկերացում կազմեն աշխարհագրական թաղանթի, նյութի ու էներգիայի շրջապտույտի, դրանց վրա մարդու ունեցած ազդեցության մասին:

10-րդ դասարանում ստացած էկոլոգիական կրթության շնորհիվ սովորողը պետք է՝

- **կարողանա** վերլուծել էկոլոգիական խնդիրներին վերաբերող թեմատիկ քարտեզներ
- **կարողանա** գնահատել աշխարհագրական թաղանթի յուրաքանչյուր ոլորտի կարևորությունը մարդու կյանքի շարունակականության համար:

«Աշխարհի բնական ռեսուրսների աշխարհագրություն» թեմայի նպատակն է սովորողների մոտ ձևավորել բնական ռեսուրսները խնայողաբար և նպատակային օգտագործելու մշակույթը, ցույց տալ Համաշխարհային օվկիանոսին որպես համաշխարհային «աղբանոց» վերաբերվելու բացասական հետևանքները:

11-րդ դասարանի դասընթացի «Բնության և հասարակության հարաբերությունները» թեման ամբողջությամբ նվիրված էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանը: Ներկայացված են հողային ռեսուրսների օգտագործման առանձնահատկությունները և պահպանումը:Մթնոլորտը, կլիմայական և տիեզերական ռեսուրսները, մթնոլորտի աղտոտման աղբյուրները և հետևանքները, մթնոլորտը աղտոտումից ահպանելու անհրաժեշտությունը: [13],[14]

Դասընթացն ավարտվում է «Համաշխարհային բնապահպանական ռազմավարությունը» թեմայով: Տրված է մարդկության առջև ծառացած երկու խնդիրները. բնական միջավայրի վրա մարդու աճող ազդեցությամբ հասնել գոբալ

[12]Մանասյան Մ. Վարդանյան Հ. Հովսեփյան Ա.Գրիգորյան Ա. «Աշխարհագրություն 10», «Զանգակ» Երևան 2017 թ, 222էջ:

[13]Մանասյան Մ. Վարդանյան Հ. Հովսեփյան Ա.Գրիգորյան Ա. «Աշխարհագրություն 10», «Զանգակ» Երևան 2017 թ, 222էջ

[14]Մանասյան Մ. Վարդանյան Հ. Հովսեփյան Ա.Գրիգորյան Ա. «Աշխարհագրություն 10», «Զանգակ» Երևան 2017 թ, 222էջ:

աղետի՞, թե՞ վերակողմնորոշվել դեպի զարգացման նոր ուղիները»: Հիմնախնդիրները լուծմանհամար 1992 թ-ին Ռիո դե Ժանեյրոյում կայացած միջազգային կոնֆերանսում ընդունված երկու փաստաթղթերթ՝ «Կայուն զարգացման համաշխարհային ծրագիր» և «XXI դարի օրակարգ»:[15]

1.Յուրաքանչյուր անձ պարտավոր է պահպանել մեր մոլորակը և նրա հարստությունները:

2.Բնական միջավայրի պահպանությունը և հարստությունները, սոցիալ-տնտեսական զարգացումը չպետք է դիտարկել որես իրարից անկախ բնագավառներ:

3.Միջազգային համագործակցությունը պետք է ուղղված լինի երկու նպատակի. ա) աշխարհի բոլոր ժողովուրդների համար շրջակա միջավայրի բարձր որակի ապահովում, բ) առողջ և էկոլոգիապես հավասարակշռված տնտեսության ապահովում:

Բնօգտագործման և բնապահպանության ոլորտում միջազգային հաղորդակցման ձևերն են.

1. Մասնակցությունը միջպետական երկկողմ և բազմակողմ պայմանագրերին,
2. Մասնակցությունը միջազգային բնապապանական ծրագրերին:

Աշակերտները տեղեկանում են նաև այս ոլորտում նշանավոր միջազգային կազմակեպություններին և գործունեության բնույթին. թռչունների պահպանութան միջազգային խորհուրդ, Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ), ՄԱԿ-ին առընթեր ՅՈՒՆԵՍԿՕ, բնական միջավայրի համամոլորակային մոնիթորինգ և այլն:

Ընդհանուր աշխարհագրության դասընթացի 2-րդ մասն ավարտելուց հետո սովորողը պետք է՝

- ինքնուրույն **կարողնա** բացահայտել իր բնակավայրում եղած էկոլոգիական խնդիրները,
- վերլուծել էկոլոգիական թեմատիկ քարտեզներ, դիագրամներ, աղյուսակներ,
- դառնա շրջակա միջավայրի պահպանման համար կազմակերպվող միջոցառումների մասնակից,

[15]Պետրոսյան Ա. Մանասյան Մ. Սարգսյան Խ. «Աշխարհագրություն 11», «Զանգակ» Երևան 2017 թ, 174 էջ:

- **կարողանա** կազմակերպել փոքր մասշտաբների միջոցառումներ (շաբաթօրյակներ, ծառատունկ, ցուցանակների պատրաստում) իրենց բնակավայրի բնապահպանական իրավիճակը բարելավելու համար:

12-րդ դասարանի «Ընդհանուր աշխարհագրություն» դասընթացը բաժանված է երկու թեմաների «Աշխարհի ինքնատիպ տարածաշրջաններն ու երկրները» և «Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները»:

Առաջինում էկոլոգիական կրթության թեման լեռնային տարածքներում տնտեսավարման արդյունքում առաջացող բնապահպանական խնդիրների առանձնահատկություններն են: Թեմայի մասն են կազմում նաև ՌԴ տարածքում բնօգտագործման առանձնահատկությունները, ռեսուրսների արդյունահանման հետևանքով էկոհամակարգի փոփոխությունները:

12-րդ դասարանի և հանրակրթական դպրոցի աշխարհագրության դասընթացն ավարտվում է համամոլորակային հիմնախնդիրների, դրանց լուծման ժամանակակից ռազմավարությունների վերաբերյալ գիտելիքների հաղորդմամբ և կրողությունների զարգացմամբ:[16]Աշխարհագրություն հանրակրթական առարկայիշրջանակներում տրվող էկոլոգիական կրթությունը ամփոփ կերպով ներկայացված է աղյուսակ1-ում:

Աղյուսակ1

	Առարկայի համապատասխան բաժնի անվանումը	**Էկոլոգիական կրթությունը հանրակրթական դպրոցի աշխարհագրության ժամանակակից դասընթացներում**
Տարրական դպրոց	«Ես և շրջակա աշխարհը 2» «Ես և շրջակա աշխարհը 3» Ես և շրջակա աշխարհը 4»	Գիտելիքներ երևույթների մարդածին և բնածին լինելու, բնության, կենդանական ու բուսական աշխարհի պահպանության, եղանակի և դրափոփոխության վերաբերյալ:Հոգատար վերաբերմունքի ձևավավորում

[16]Մանասյան Մ. Հովսեփյան Ա. Պետրոսյան Ա. «Աշխարհագրություն 12», «Զանգակ» Երևան 2018 թ, 127 էջ:

		հայրենի բնաշխարհի և բնության յուրաքանչյուր տարրի նկատմամբ:
Միջին դպրոց	6- «Աշխարհագրություն: Մայրցամաքներ, օվկիանոսներ» 7- «Հասարակականաշխարհագրություն Աշխարհ» 8- «Հասարակականաշխարհագրություն Տարածաշրջաններ», 9- «Հայաստանիաշխարհագրություն»	Գիտակցում աշխարհագրական թաղանթի ոլորտների փոխադարձ կապերի, ամբողջականության, էներգիայի և նյութի շրջապտույտի պահպանման վերաբերյալ: Բնության բազմազանության պահմանությունը որպես Երկրագնդի հարստության պահպանում:Էկոլոգիական խնդիրների տարածաշրջանային առանձնահատկությունները, գլոբալ դրսևորման հետևանքները: Գործողություններ ուղղված էկոլոգիական խնիրների լուծմանը և դրանց բացասական հետևանքների չեզոքացմանը: Հայաստանի, Արցախի և Հայկականլեռնաշխարհի բնությանբնառեսուրսային, բնապատմական, հոգևոր-գեղագիտականարժեքը, և դրանք պահպանելու կարևորության գիտակցում:
Ավագ դպրոց	«Ընդհանուրաշխարհագրություն» 10, 11, 12	Էկոլոգիական խնդիրների վերաբերյալ թեմատիկ քարտեզների մշակումև վերլուծություն: Էկոլոգիական հավասարակշռության պահպանումը Երկիր մոլորակի վրա մարդու կյանքի

		շարունակականության գրավական: «Կայուն զարգացում» և «21-րդ դարի օրակարգ» փաստաթղթերի նպատաների ընկալում և դրանց հասնելու գործողությունների սովորողների բաժնի ներկայացում: Կրթությունն ավարտվում է համամոլորակային հիմնախնդիրների ուսումնասիրմամբ:

Էկոլոգիկան կրթության բովանդակությունը աշխարհագրության ժամանակակից դասընթացներում

Ամփոփելով աշխարհագրության դասընթացում էկոլոգիական կրթության բովանդակությունը, անդրադառնանք այն հիմնական որակներին, որոնք ձևավորվում են աշակերտների մեջ.

- բնության բազմակողմանի արժեքների գիտակցում՝ որպես հասարակության հոգևոր և նյութական ուժի աղբյուր,
- շրջակա միջավայրի վիճակի գնահատման կարողության ձևավորում, իր գործողությունների հնարավոր հետևանքների կանխատեսում՝ ողջ գործունեության ընթացքում բացառելով բնության վրա բացասական ազդեցությունը,
- բնության մեջ վարքի նորմերի գիտակցված պահպանում՝ թույլ չտալով բնական միջավայրի աղտոտում կամ ավերում,
- բնության բարեկարգող և վերափոխող գործունեության ակտիվացում և անհանդուրժողականություն այն մարդկանց գործողությունների նկտամամբ, որոնք վնաս են հասցնում բնությանը: Բնության պահպանման քարոզչություն:

Նշված որակների ապահովման դեպքում կունենանք հասարակություն, որի կենցաղավարման մասը կհանդիսանա էկոլոգիական մշակույթի տարրերի պահպանումը, ձգտելով կայուն զարգացման:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով վերը շարադրվածից պարզ է դառնում, որ էկոլոգիական կրթությունը ժամանակի հրամայականներից մեկն է, և դա հնարավոր է իրականացնել աշխարհագրության ժամանակակիցդասընթացների կատարելագործման պայմաններում: Որակյալ էկոլոգիական կրթությունը ապահովում է մարդու կյանքի շարունակական բնույթը երկիր մոլորակի վրա:

Էկոլոգիական կրթությունը հանրակրթական դպրոցի աշխարհագրության ժամանակակից դասընթացներում ուսումնասիրելով հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

1. Էկոլոգիականկրթությունը ուղղված էներկայումսգոյությունունեցողաշխարհին և մոլորակի վաղվա բնականոնշարժընթացին:Դա այն գործիքներից մեկն է, որով ապահովելու է մարդու կյանքն ու գոյությունը Երկիր մոլորակի վրա, էկոլոգիապես մաքուր և անվտանգ միջավայրում:
2. Էկոլոգիական մշակույթը մարդու գիտակցված վերբերմունքն է բնության նկատմամբ: Անձի էկոլոգիական մշակույթի մոդելի ձևավորումը հասարակության կայուն զարգացման պայման է: Ժամանակակից աշխարհում այն պետք է դառնա ընդհանուր մշակույթի անհրաժեշտ բաղադրիչ, որպեսզի ապահովի ցանկալի արդյունք:
3. Գլոբալացած սոցիալ-էկոլոգիական դեգրատացիան էկոլոգիական կրթությունը պարտադիր է դարձրել ժամանակակից հանրակրթական դպրոցում դասավանվող բոլոր առարկաների շրաջանակներում: Սակայն այն համակարգային բաղադրիչ է դառնում և խորը իմաստային ընկալում ստանում աշխարհագության դասընթացում: Աշխարհագրության ուսուցչի խնդիրն է դարձել լուծել համակարգի երկու խնդիրները՝ աշխարհագրական կրթություն և էկոլոգիական կրթություն:
4. Հանրակրթական դպրոցի տարրական օղակից էկոլոգիական կրթության կազմակերպումը հնարավորություն է տալիս վաղ հասակից ձևավորել բարոյական և էկոլոգիական գիտելիքներով զարգացած անհատ, որը պատկերացնում է մարդու ազդեցությունը բնական միջավայրի վրա, իր բացասական և դրական կողմերով:

5. Հիմնական դպրոցի էկոլոգիական կրթությամբ ձևավորվում է էկոլոգիապես գրագետ պատանի, ով գնահատում է բնության պահպանության անհարժեշտությունը, առաջարդում է խնդիրների լուծման արդի ճանապարհներ: Դասընթացի շնորհիվ էկոլոգիական մշակույթը արմատավորվում է սովորողի գիտակցության մեջ:
6. Ավագ դպրոցի էկոլոգիական կրթության շնորհիվ ձևավորովում է բնության նկատմամբ պատասխանատու անհատ, ով արդեն չափահաս կյանքում պետք է նախաձեռնողական վերբերմունք ցուցաբերի շրջակա բնականմիջավայրիպահպանմանաշխատանքներում, կամավորմասնակցություն ունեն էկոլոգիական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներին մինչևբարենպաստարդյունքիհասնելը: Նշված որակների պահպանման դեպքում կարձանագրվի աշակերտների կողմից էկոլոգիական կրթության գլխավոր գաղափարի ընկալման փաստը «Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարության:

Գրականության ցանկ

1. Ալեքսանյան Լ. Թորոսյան Ն. «Ես և շրջակա աշխարհը 2», «Աստղիկ գրատուն» Երևան 2018 թ:
2. Ալեքսանյան Լ. Թորոսյան Ն. «Ես և շրջակա աշխարհը 3», «Աստղիկ գրատուն» Երևան 2018 թ:
3. Ասատրյան Լ. Թ. «Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները», «Արտագերս» Երևան 2006 թ, 334 էջ:
4. Ղազարյան Է. Թռչունյան Ա. Մելիքյան Գ. Վարդանյան Թ. Խաչատրյան Հ. «Բնագիտություն 5», «Աստղիկ գրատուն» Երևան 2013 թ, 159 էջ:
5. Թորոսյան Ն. «Ես և շրջակա աշխարհը 4», «Աստղիկ գրատուն» 2018 թ, 176 էջ:
6. Հովսեփյան Ա., Գրիգորյան Ա., Մանասյան Մ. «Աշխարհագրություն 6» Երևան 2018թ, 159 էջ:
7. Մանասյան Մ., Մարգարյան Ռ. Հովսեփյան Ա., Հովհաննիսյան Գ. «Աշխարհագրությոն 8», «Մանմար» Երևան 2018, 223 էջ:
8. Մանասյան Մ. Հովսեփյան Ա. « Հայաստանի աշխարհագրություն 9», «Տիգրան Մեծ» Երևան 2018, 239 էջ:

9. Մանասյան Մ. Վարդանյան Հ. Հովսեփյան Ա.Գրիգորյան Ա. «Աշխարհագրություն 10», «Զանգակ» Երևան 2017 թ, 222էջ:

10. Մանասյան Մ. Հովսեփյան Ա. Պետրոսյան Ա. «Աշխարհագրություն 12», «Զանգակ» Երևան 2018 թ, 127 էջ:

11. Մարգարյան Ռ. Մանասյան Մ. Հովհաննիսյան Գ. «Աշխարհագրություն 7», «Մանմար» Երևան 2018թ, 178 էջ:

12. Մինայսան Ա. «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա», Երևան 2013 թ.:

13. Պետրոսյան Ա. Մանասյան Մ. Սարգսյան Խ. «Աշխարհագրություն 11», «Զանգակ» Երևան 2017 թ, 174 էջ:

14. https://studref.com/359641/ekonomika/kontseptsii_razvitiya_tsivilizatsii_veke

15. https://nsportal.ru/shkola/kraevedenie/library/2019/09/26/ekologicheskie-problemy-v-shkolnom-kurse-geografii

16. https://cyberleninka.ru/article/n/formirovanie-ekologicheskoy-kultury-shkolnikov-na-urokah-geografii